ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք.
Հեռախոս (0231) 6-00-25 էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

09 սեպտեմբերի 2019 թվականի N130-Ա

ԴԱՎԻԹ ՄԵՅՐՈՅԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 6-ի N4 նիստի N02-Ն որոշումը, համաձայն 2019 թվականի սեպտեմբերի 9-ին << Մանուկյան Աստղիկ>> ԱՁ-ից /որակավորման վկայական 096, տրված 2012 թվականի փետրվարի 27-ին/ ստացված հողամասի հատակագծի և 2019 թվականի սեպտեմբերի 9-ին Դավիթ Մեյրոյանի դիմումը **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքում գտնվող, քաղաքացի Դավիթ Մեյրոյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանյան խճուղու 1-ին փողոցի 1-ին փակուղու N1 հասցեում գտնվող, 04-065-0072-0032 կադաստրային ծածկագրով հողամասից և շենք- շինություններից առանձնացված 0,0645 հեկտար հողամասին և 5,9 քառակուսի մետր շինությանը /համաձայն հատակագծի / տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ համայնք Մերձավան Երևանյան խճուղու 1-ին փողոց 1-ին փակուղի N1/2 :

0,3696հեկտար հողամասին և դրա վրա առկա շենք- շինություններին /համաձայն հատակագծի / թողնել Երևանյան խճուղու 1-ին փողոց 1-ին փակուղի N1 հասցեն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի սեպտեմբերի 9
Համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք.
Հեռախոս (0231) 6-00-25 էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2019 թվականի N131-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912- Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով կառույցն իրականացրած անձին՝ Գեղեցիկ Ռուսիկի Համբաձումյանին, գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքով/ տրամադրելու վերաբերյալ 2019 թվականի սեպտեմբերի 10-ին տրված թիվ 1 գրավոր առաջարկությունը և վերջինիս կողմից ներկայացված համաձայնությունը, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան հանայնքի սեփականություն հանդիսացող /կադաստրային ծածկագիր 04-065-0012-0112, սեփականության իրավունքի վկայական N13062019-04-065/, հողակադաստրային տարածագնահատման 9-րդ գոտու, Երևանյան խճուղու N63/4 հասցեում կառուցված 35,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով վարսավիրանոցի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,0035 հեկտար հողամասն ուղղակի վաճառքով օտարել այդ շինությունը ինքնակամ կառուցող Գեղեցիկ Ռուսիկի Համբաձումյանին:

2. Վարսավիրանոցի վաճառքի վճարը յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար 15 300 ՀՀ դրամ է.

35,0 քառակուսի մետր վարսավիրանոցի օրինականացման վճարը կազմում է՝ 35,0x 15 300=535 500ՀՀ դրամ:

Շինության պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասն օտարել կադաստրային արժեքով: Բնակավայրերի հասարակական կառուցապատման մեկ հեկտար հողամասի կադաստրային արժեքը 19 140 000 ՀՀ դրամ է.

բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,0035 հեկտար հողամասի օրինականացման վճարը կազմում է 0,0035 x 1 9 140 000=66 990 ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների և հողամասի օրինականացման համար հաշվարկված վճարները 60-օրյա ժամկետում պետք է վճարվի՝ 535 500 ՀՀ դրամը Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին, իսկ 66 990 ՀՀ դրամը՝ համայնքի ֆոնդային եկամուտների 900325175132 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

Վճարման ենթակա է՝ ընդամենը 602 490ՀՀ դրամ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի սեպտեմբերի 11

համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք.
Հեռախոս (0231) 6-00-25 էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2019 թվականի N132-Ա

ԱՆՈՒՇ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ԽՈՐԵՆ ՆՇԱՆԻ ՔԱՐՏԱՇՅԱՆԻ, ԳԵՎՈՐԳ ՆՇԱՆԻ ՔԱՐՏԱՇՅԱՆԻ ԵՎ ՆՇԱՆ ԳԵՎՈՐԳԻ ՔԱՐՏԱՇՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք , հիմք ընդունելով 2019 թվականի սեպտեմբերի 13-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագիծը, եզրակացությունը և 2019 թվականի սեպտեմբերի 13-ին Անուշ Հովսեփյանի դիմումը, **որոշում եմ.**

1. Անուշ Արտավազդի Հովսեփյանի, Խորեն Նշանի Քարտաշյանի, Գևորգ Նշանի Քարտաշյանի և Նշան Գևորգի Քարտաշյանի կողմից, իրենց սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 3-դ փողոցի N71 հասցեում գտնվող/ կադաստրային ծածկագիր 04-065-0015-0004, սեփականության իրավունքի վկայական 70320/, բնակելի տանը կից ինքնակամ կառուցած 96,4 քառակուսի մետր

արտաքին մակերեսով բնակելի տունը, ինքնակամ բացված 2 /երկու/ դռները և 3 /երեք/ պատուհանները ճանաչել օրինական:

2. Սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է:

96,4 քառակուսի մետր բնակելի տան օրինականացման վճարը կազմում է 96,4 x 1700=163 880 ՀՀ դրամ:

Ինքնակամ բացված մեկ դռան և պատուհանի օրինականացման վճարը 1700 ՀՀ դրամ է.

2 / երկու/ դռան և 3 /երեք/ պատուհանի օրինականացման վճարը կազմում է 5 x1700=8500 ՀՀ դրամ:

Վճարման ենթակա է՝ ընդամենը 172 380ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարները 30-օրյա ժամկետում պետք է վճարվի՝ Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի սեպտեմբերի 13

Համայնք Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք.
Հեռախոս (0231) 6-00-25 էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

19 սեպտեմբերի 2019 թվականի N133-Ա

ՄԻՔԱՅԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք , հիմք ընդունելով 2019 թվականի սեպտեմբերի 13-ին <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ից /որակավորման վկայական 0244, տրված 2012 թվականի հոկտեմբերի 29-ին/ ստացված հողամասի հատակագիծը, եզրակացությունը և 2019 թվականի սեպտեմբերի 19-ին Միքայել Նահապետյանի դիմումը, **որոշում եմ.**

1. Միքայել Նահապետյանի կողմից, իրեն սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի 3-դ փողոցի N32 հասցեում գտնվող/ կադաստրային ծածկագիր 04-065-0026-0001, սեփականության իրավունքի վկայական 1108194/, արտաքին մակերեսով 119,3 քառակուսի մետր բնակելի տունը և 17,4 քառակուսի մետր թռչնանոցը ճանաչել օրինական:

2. Սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան օրինականացման վճարը՝ մեկ քառակուսի մետրի համար 1700 ՀՀ դրամ է:

119,3 քառակուսի մետր բնակելի տան օրինականացման վճարը կազմում է 119,3 x 1700=202 810ՀՀ դրամ:

Ինքնակամ կառուցված թռչնանոցի օրինականացման վճարը մեկ քառակուսի մետրի համար 1020 ՀՀ դրամ է.

17,4 քառակուսի մետր թռչնանոցի օրինականացման վճարը կազմում է 17,4 x 1020=17 748ՀՀ դրամ:

Վճարման ենթակա է՝ ընդամենը 220 558ՀՀ դրամ:

Որոշման ընդունման օրվանից սկսած, շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարները 30-օրյա ժամկետում պետք է վճարվի՝ Մերձավան համայնքի վարչական եկամուտների 900325175157 հաշվեհամարին:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2019 թվականի սեպտեմբերի 19

Համայնք Մերձավան